

վերադարձնել և հիւանդ գործակա՞նաց օգ-
նութեան գործածութեամբ համար կար-
միր Մահիկի մասնագործին պիտի
յանձնուի :

Թղթադրամոց բարձման յանձ-
նա՞ծողը կը ծանուցանէ թէ ալիւ-
րին տուրքէն երեք քաւր թի օրը 210000,
չորեք քաւր թի օրը 193480 և հինգ քաւր-
թի օրն ալ 182580 զըշ հասոյթ գոյա-
ցած է :

Պրուսացիներ եկած լուրերը կը ծա-
նուցանեն թէ ալիւրին տուրքն ութ
աւուր մէջ 22,900 զըշ հասոյթ տը-
ւեր է :

Ճերխէի Հաւաքար լրագրողը կը
ծանուցանէ թէ նախկին Մեծ-Եպար-
քա Մէհմէտ Ռիշտի փաշան արտա-
քոյ կարգի պաշտօնով մ'Եւրոպա պի-
տի երթայ մեծ տէրութեանց կառա-
վարութիւններուն քով :

Յիշեալ լրագրողը կը ծանուցանէ
նաեւ թէ Նիքօլա մեծ դուքսը Պա-
թուի, Շուսուի և Վալաիայի ան-
միջապէս պարպումը և Ռուսաց յանձ-
նալիլ պահանջներ է ըստ տրամադ-
րութեան Ոսթիէֆանսի դաշնագ-
րութեան :

Բ. Դուռն ալ պատասխաններ է թէ
Ռուսներն ալ նոր Պուլղարիոյ սահ-
մաններէն դուրս գրաւած բոլոր գիւ-
քերէն պիտի մեկնեն, բայց գեռ-
չին մեկնած : Ռուսի Բ. Դուռն պատ-
րաստ է վարան, Շուսուի և Պա-
թուի Ռուսաց յանձնել երբոր Ռուսը
նոր Պուլղարիոյ սահմանները քաշուին :

Տպագրական տեսչութեան կող-
մէ լրագրաց հազարեալ պաշտօնա-
կան աղբ մը ուտ կը հանէ Պատի-
րէթի տուած այն լուրը թէ Աւստրի-
ոյ կառավարութիւնը Պոսնան գրաւ-
ւելու գիտաւորութիւնն ունենալը ծա-
նուցեր է Բ. Դրան :

Նմանապէս կիմացնէ թէ Հօպարթ
փաշան Օսմանեան տէրութեան ծա-
նուցութենէն հրաժարած է, այլիւր
հօրը ծանր հիւանդ ըլլալն իմանա-
լով զայն տեսնելու համար Անգղիա
երթալու և 20 օրէն վերադառնալու
հրաման տուած է Բ. Դրան :

Բամիզ Չիֆթիլիկ և Տալուս փա-
շայի զօրանոցները պարպուելով հի-
ւանդանոցի փոխարկեցան : Իսկ մէ-
ջէն հանուած զորքերը վրաններու
ներքեւ գրուեցան :

Հայէպի Էօֆրաթ լրագրողը կը ծա-
նուցանէ թէ Չէլթուրի մէջ խռովու-
թիւն ծագեր է :

Երէկ իրիկուն ժամ 2 Վէլն բա-
ւական սաստիկ երկրաշարժի ցնցում
մ'աղաչինք, որ տասն երկվայրկեանի
շափ տեւց :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

7 տարի ուսում իրիկուն	—
8 տարի շարժ առաւում	—
բացակցութեան	8,35
ժամ 6 ին	8,36
Բուսնի երկրաշարժի	Փր. 30
Թղթադրամ	Լր. 266 20

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԱԹՂՈՅ

Կ. Պոլսի 7 Ապրիլ

Սօսիէթէ Ժէնէրալի բաժ. Անգլ. Լր.	2,25
Փոխանակութեան	2,
Կ. Պոլսի Պաշտպանի	3,
Քրէտի Ժէնէրալ	2, 5
Քրէտի Սթրո—թիւր	—
Փոխ. 1863	Ֆր. 40
1865	40

1869	38
1872	43 50
1873	37
Թրամուայ	Օսմ. Լր. 4 5

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՅ

7 Ապրիլ

Անգլ. Լր.	109 5
Նարթն տակի	86 37
Խմբի Ռուս	89 3
Գրքեր	50 20
Հինգ ֆրանք	—
Հինգ անգլ.	421 20
Պրինս	169

ԱԶԳԱՅԻՆ

Բեդրուպուրիէն եկած նամակներ
կը հաստատեն Գեր. Խորէնի Նար-պէյ
արքեպիսկոպոսին եղած համակրա-
կան ընդունելութիւնները թէ կայսեր
և թէ կորչաքօֆ իշխանին կողմնէն :
Մանաւանդ Կորչաքօֆ իշխանին փա-
խադարձ այցելութիւնը Ռուս մեծա-
մեծայ վրայ մեծ տպաւորութիւն ը-
նկելով, բոլոր նախարարք և բարձ-
րաստիճան անձինք այցելութեան գը-
նացիւր են Գեր. Նար պէյի և ա-
մենն ալ մեծապէս գոհ եղեր են տ-
նոր Եւրոպական բարեկրթութենէն
և հմտալից խօսակցութենէն, որովք
գիտէ փայլիլ և յարգանք ու հա-
մակրութիւն գրաւել :

Կը յուսացուի թէ Գեր. Նար պէյ
պիտի յաջորի Հայաստանի աւերեալ
վանորէից և վարժարանաց համար
գրամական մեծ օգնութիւններ ըս-
տանալ տեղւոյն հարուստ ազգայնոց
և միջև իսկ Ռուսաց կողմէ :

Իդմիրեան Գեր. Մատթէոս ե-
պիսկոպոսն՝ որ անցեալները Մ. Էջմի-
ածին գնացած էր, չորեք քաւր թի օրը
Կ. Պոլսի վերադարձաւ : Աւստրիական
շոգեւնաւով :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Բոլոր անուն Աւստրիացի մ'որ երկար
ատեն Պարսկաստան կեցած է, Վիեննայի
պարբերական հանդէսներէն միոյն մէջ
հետաքրքրական երկարութիւն մը հրա-
տարակած է արեւելեան թանկագին քարի
մը, գոճագիւ վրայ, որոյ կեղծ բաւա-
կան նմանութեամբ Եւրոպայի մէջ վերջին
ատեններս շինել սկսած են :

Եւրոպացիք գոճագիւն թէքուս կամ
թէքուս կըսեն, հաւանականաբար կամ
անոր համար որ այս տեսակ քարերը Տաճ-
կաստանի միջոցաւ Եւրոպա տարուած են,
և կամ Եւրոպացեաց Տաճկաց գէմ մը ած-
պատեցանքներուն մէջ այս տեսակ քա-
րերով զարդարուած բազմաթիւ գէն ու
զարդք և ձիւ կազմածներ ձեռքերին
անցած են : Գոճագիւն բուն գոճագիւն
տեղը Պարսկաստանի հիւսիսային կողմն
է : Պարսիկք քիւս կանուանեն այս քա-
րն, որ կը նշանակէ երջանկութիւն, և
այս պատճառաւ շատ թագաւորներ վը-
րանին կրած են այդ քարէն : Այն կար-
ծիքը թէ այս քարը վրան կողը երջան-
կութեան կը պատահի և շատ վնասներէ
ազատ կըլլայ, արեւելից շատ ազգերուն
մէջ տարածուած է և մինչև ցայժմ Հա-
յոց մէջ իսկ կայ Տաճկերէն քիւս կամ
թէքուս բառը Պարսկերէնէն եկած է :

Գոճագիւն գլխաւորաբար երկու տե-
սակ կըլլայ. այն է հին տեսակն և նոր
տեսակը (մատէն քիւս) և մատէնի նէլ) :
Առաջին տեսակն որ մութ երկնագոյն
կապուտէն մինչև ամենաբաց երկնագոյն
կըլլայ, ամենէն յարգին է. այս տեսա-
կին Ապուլու Ռէյնայ ալ կըսեն, փասն գի-
այս անուն անձ մ'առաջին անգամ այդ
քարերուն հանք բանեցուցած է : Բ. տե-
սակը շէքուս կամ շէքուս կըսուի և
Պարսկաստանի մէջ նոյնպէս յարգի է,
բայց Եւրոպայի մէջ այնչափ չափնուի :

Գոճագիւն այս տեսակներն իրարմէ ու-
րոշելու համար մեծ փորձութիւն և

վարժութիւն պէտք է : Սա ալ խնդիր մ'է
թէ Ա. տեսակի գոճագիւն օղին ազդե-
ցութեան ներքեւ մնալով մշտնապէս
իւր դոյնը կը պահէ. այս կասկածելի է,
բայց ստուգուած չէ :

Առ նուազն 200 տարուան զէն ու դար-
դերու վրայ ընդհուդեալ գոճագիւններէն
շատն արուած և դոյններին նետած
տեսնել է յողուածին հեղինակը, մինչ-
դեռ առանձին ազդեցեալ քարեր իրենց
յատկութիւնը պահած են. Վիեննայի
կայսերական հանքաքանակաւ թանգարա-
նին մէջ քարեր կան որ դարէ մ'ի վեր
անտեսեց մնացած են :

Ամենին անրիժ և մեծկալ գոճագիւ-
ներ սովորաբար նոյն իսկ Պարսկաստանի
մէջ ալ հազուադէպ են : Նոր ճանրող-
ներ, որ հանքերուն մերձակայ տեղերէն
գոճագիւ գնել ուզեր են, նշանաւոր քա-
րեր չեն գտած բնաւ. վասն զի հին հան-
քերն սպառած են, և նորերն ալ որ նո-
ցա մօտ փորուած են, շատ քիչ արտադ-
րութիւն կընեն : Բայց և այնպէս տեղա-
ցիք անդորդ Եւրոպացեաց շատ մը գոճագիւ
կը ներկայացնեն, որք սովորաբար ստորին
տեսակէն են և կամ յատկապէս ներկուած
կըլլան, վասն զի Պարսիկք իշխալ քարը
ներկելով անոր քիչ մը ժամանակ կապ-
տադոյն երբին մը տալու հնարք գիտեն :
Եւրոպայի մէջ ալ անարատ գոճագիւններն
հազուադէպ են : Անգղիացի տիկնոջ մը
հոգակաւոր գոճագիւն զարդին մէջ, որ Վի-
եննայի արուեստաշինչէսը գրուած էր,
մէկ քար մ'ալ չկար, կըսէ Պ. Բուք, որ
անարատ ըլլար :

Գոճագիւն դինը շատ կը տարբերի,
վասն զի ասիկա բնաւ ուրիշ ազանց պէս
չէ կարելի իւր փայլին, կրակին, մեծու-
թեանն և այլ հաստատուն յատկութեան-
ցը համեմատ գնահատել : Իւրաքանչիւր
գոճագիւն դինը գնահատելու մտահաճութե-
նէն կախեալ է : Արեւելիցք առ հասարակ
Հնդկաստանէն մինչև Մարօք գոճագիւն կը
յարդեն, բայց ազդեր կան որ ալ աւե-
լի և սաստիկ կախորժին անկէ, ինչպէս
են Վեհը և Ռուսը, և բարձր դին կու-
տան անոնց : Ռուսիոյ համար այս քարին
գլխաւոր վաճառատնէն Նիժնի Նովո-
րոտ քաղաքն է, ուր այս քարերը կու-
գան Կասպից ծովու և Վոլգայի ճանրով :
Եւրոպայի մէջ գոճագիւն դինը նորե-
լուկի համեմատ կը փոփոխի, թէ և ա-
մենուն դիտցած բանն է թէ տիկնոց
զլխուն վրայ անդամանդի նման հատու-
ած կողով գոճագիւնով զարդարեալ սանտ-
րի մը պէս գեղեցիկ բան չկայ :

Ըսողներ եղած են թէ Պարսից Շահն
անթիւ անհամար գոճագիւ քար ունեցած
ըլլայ. տղթոր Բուքը՝ որ Շահին բժիշկն
եղած է, կը հերքէ այս կարծիքը : Շա-
հը միշտ մատանի վրայ ազդեցեալ գո-
ճագիւ մը կը կրէ մատը. այս գոճագիւն
6—7 քրաթ կայ, և 4500 ֆիթերի գըն-
ւած է :

Չմոռանք այս տեղ յիշելու որ եր-
բեմն Պարսկաստանի և Եւրոպայի մէջ ե-
ղած գոճագիւն վաճառականութիւնը գրե-
թէ բոլորովին Հայոց ձեռք էր. և գո-
ճագիւն, ինչպէս նաև ուրիշ ազդեր Վս-
տէրկասիի ճանրով Եւրոպա բերող և վա-
ճառող Հայերն էին :

Ա Զ Դ

Ռոտտովոյն հայազգի ճարտար
բժիշկ մը կը խնդրուի, որուն տեղա-
կան կառավարութիւնը 1000 զըշ ամ-
սական պիտի վճարէ իրան 125 զըշէն,
առանց հայաւերու հիւանդաց այցե-
լութիւններէն ստանալիք վարձքը, որ
ամիսն 3—4000 զըշ կընայ հասնել,
բաւական է որ պատուաւոր և բարո-
յականի տէր անձ մ'ըլլայ :

Միանգամայն վարպետ դեղագործ
մը կողմէն բժշկին հետ, և ասոր հա-
մար ալ յատուկ գեղարան մը կայ
պատրաստ ամեն տեսակ դեղերով :

Ա Զ Դ

ՄԱՍՆԱԺՈՂՈՎ ՕՍՄ. ՊԱՐՏԱՏԵԱՐՑ
Ի ԹՈՒՐԻՔԻԱ

Կը ծանուցուի հասարակութեան

Թէ Օսմանեան պարտատեարց մարտ
9/21 ի ընդհանուր ժողովին մէջ քը-
ւեարկեալ որոշմանց մէկ օրինակը հե-
տեւեալ հաստատութեանց տմեն մէ-
կուն մէջ զրուած է, ստորագրու-
թիւն ստանալու համար :

Պանք Էնթուրիալ Սթոման.
Քրէտի Լիօնէդ.
Պանք տը Քոնսթանթինոպլ.
Սօսիէթէ Ժէնէրալ Եր Էմբիւ Թ-
թոման.
Քրէտի Ժէնէրալ Օթոման.
Սօսիէթէ Օթոման տը Շահեֆ է տը
Վալէօն, և
Մօսիւ Ա. Ջուրդի գրասենեակը Ղա-
լաթիա Գէորգ պէյ խան, 12 :

Թ Ա Ր Գ Մ Ա Ն

ԹՈՒՍԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Հայերէն գրերով

Այս խօսակցութեան գիրքը, որ
ազգայնոց մեծ գիւրութիւններ կըն-
ծայէ, կը ծախուի Եֆէնիմովի Չիլի-
կըրէն ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկաս
եան գրատունը : Գին 50 սանթիմ :

Ի Լ Ա Ն

Քէօհնէ Խիյաճ տէօքմէ մատէն
բարչապ, գըլէ օն պին, պէհէր գը-
լէսի օթուղ փարո :

Սարը թէլ թօղ, գըլէ պէհ պին,
պէհէր գըլէսի եհտի զրուշ երկրմի
փարա :

Քէօհնէ գաղղան սանը, գըլէ երեզ
պին կըլ երեզ, պէհէր գըլէսի ալթ-
մըշ փարա :

Խուրտէ թիմուր բարչապ, գըլէ
երեզ պին :

Պէյքօղտէ քեպին տեպպաղխա-
նէի տարիտէ մէլմուտ օլուպ ֆի-
րուսթ օլուսմաք իւղէ միւղայիտէ-
յէ քոնուրն պալատէ մարաղգամ
տէօթթ քալմէ էշեանը պէհապ երեզ
լիւք քալմէ երեզ զրուշա օլարաք
նաքտէն օլարաք վիրիլուպ, հէման
ախդ իտիլմէք շարթը իլէ ֆիլաթը
մարաղգամէլէր իլէ թալիպի էօհ
տէսիտէ օլուսղու կիպի խուրտէ
թիմուր բարչալէրինն տալի զուհուր
խտէքթ թալիպի իլէ ֆիլաթը գա-
րարչաղըրթաղընտան վէ նիսանը
րուսիին երկրմիսն թէնէշէպիկ կի-
նի թէքրար միւղայիտէլէրի պիլ ին-
րու քարարը գաթիլէլէրի վէրիլէրէք
ֆիրուսթ օլուսմաղընտան, իշթի-
րուսնա թալիպ օլարալէր եհվի մէք
քիւրտէ ճարը Շուրալի ասքերիլէ կէլ-
մէլէրի վէ էշեալ մէղրիւսէյի կէօթ-
մէք իսթէյիլէրին տահա էլվէլէք
տեպպաղխանէի մէքքիւրէ միւրոմա-
ալթ իլլէմէլէրի :

4 Նիսան 1878

Պապը Սէրասքէրի

Խոստմանալէրտէն մատու, թա-
յինաթ իշիւն մըղ տարի քեպիլի գօ-
յուն էլթի պուրնաք մուհալ հիւքմինէ
կիրմիլ օլմասնտան տօլայը, իշպու-
տօգան տէօթթ սէնէյի բուսիլէսի
մարթը իշուն, խոստմանալէրին
ղայրիլէ վէրիլմէք իշուն, զարուրի սը-
ղըր էլթի գօթիլթթ օլուս րապթ օլուն
մըշ, վէ պուրնա պէհէր գըլէսի Ե-
շուն օն պիլ զուրուշ պէհէլ իլթար
գարարչաղըրթըր Օլըղընտան, էս-
հապը թալիպիլէր իսթիլէրիլէրի
ըղըր էլթի օլարաք մահալլէրինտէն
այ էն, վէ ետիստ իսթիլէրի իսէ,
պէհէր գըլէսի գայիլմէ երեզ զուրուշ
հիսապի իլէ օն պիլ զուրուշ օլա-
րաք իշպալիլէր իսթիլէրիլէրի մալիլմէ
լէրի օլմաք իւղէ իլան օլունուր :

14 Մարտ 1878

Պապը Սէրասքէրի

